ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 202-Ա

ԿԱՐԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 92-րդ հոդվածով, 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37.1, 37.2 և 39–րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 29-ին կայացած նիստի թիվ 836 արձանագրությունը, 2025 թվականի մարտի 18-ի Կարինե Նազարյանի հետ կնքած №09 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «ա» ենթակետը և Կարինե Նազարյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Կարինե Սուրիկի Նազարյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով՝ 1 տարի փորձաշրջանով: Փորձաշրջանի ղեկավար նշանակել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Եղեգնաձորի վարժարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Հասմիկ Մարգարյանին: Աշխատանքը սկսել 2026 թվականի օգոստոսի 6-ից:

2. Լուծել Կարինե Նազարյանի հետ 2025 թվականի մարտի 18-ին կնքած №09 աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքի վերջին օրը համարել 2026 թվականի օգոստոսի 5-ը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 5

ք. Եղեգնաձոր